ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N33-Ա

«28» սեպտեմբերի 2018 թվական գյուղ Հայկասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.29955 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասար համայնքի սեփականությունը հանդիսացող համայնքապետարանի շենքի պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի որոշման «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասարի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Հայկասարի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1250-Ն որոշման համաձայն սեփականության իրավունքով համայնքին է փոխացվել, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամաս և այն ամրագրվել է բնակավայրի կադաստրային քարտեզում, հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու և անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները պետական գրանցման ենթարկելու համար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասար համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասար համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, որով նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասար համայնքի սեփականությունը հանդիսացող 08-060-0017-001- կադաստրային ծակագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 4.79 հեկտար հողատարածքից առանձնացված 0.29955 հեկտար հողամասը (հասցեն՝ Հայկասար համայնք, 1-ին փողոց, թիվ 18) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում առկա համայնքապետարանի շենքի, որում տեղակայված է